

Արձանագրություն N 1-08/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի
օգոստոսի 31-ի նիստի

Ներկա էին՝ Թորքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Ծատրյան Ա.Ա., Բաղունց Գ.Ռ., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտորի կոչումներ շնորհելու մասին:
2. Դաշտային աշխատանքների ընթացքի մասին:
3. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու» կարգում փոփոխություն կատարելու մասին:
4. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրի ուսանողներին, մագիստրանտներին ուսանողական նպաստ տալու մրցույթի կազմակերպման (շրջափոխման) և անցկացման» կարգի մասին:
5. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների տեղափոխության մասին:
6. Լեհաստանում կայանալիք միջազգային գիտաժողովին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչների մասնակցության մասին:
7. ԱՀ Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության 1-ին կուրսի դասընթացների կազմակերպման մասին:
8. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության առաջին կուրսերում լրացուցիչ պետպատվերի տեղեր հատկացնելու մասին:

Լսեցին 1 - Արցախի Հանրապետությունում ինժեներական կրթության հիմնադիրներ՝ Արպատ Սանջյանի Ավանեսյանին, Գագիկ Միքայելի Բաղունցին և Արթուր Բաբկենի Թովմասյանին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտորի կոչումներ շնորհելու առաջարկություն ներկայացվեց:

Որոշեցին 1 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտորի կոչումներ շնորհել Արցախի Հանրապետությունում ինժեներական կրթության հիմնադիրներ՝

Արպատ Սանջյանի Ավանեսյանին, Գագիկ Միքայելի Բաղունցին և Արթուր Բաբկենի Թովմասյանին:

Լսեցին 2 - Դաշտային աշխատանքների ընթացքի մասին զեկուցեց պրոռեկտոր՝ Ս.Գալստյանը: Նշվեց, որ սկսվել են բերքահավաքի աշխատանքները: Ստացված բերքի մի մասը վերամշակվում է արտադրամասում, մի մասը՝ պետք է իրացվի:

Որոշեցին 2.1 - Ընդունել ի գիտություն դաշտային աշխատանքների ընթացքի մասին պրոռեկտոր՝ Ս.Գալստյանի տեղեկատվությունը:

2.2 - Վարձակալված հողամասից ստացված բերքի տեսակավորման և իրացման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Գալստյան Սարիբեկ Բարդուղի,

2.Հակոբյան Գեորգի Ամիրի,

3.Մուսայելյան Վալերի Սուրենի,

4.Միքայելյան Դավիթ Կամոյի:

2.2 - Բանջարանոցային մշակաբույսերի իրացման գները սահմանել կախված բերքի որակից. պմիդորի համար՝ 80-150դր., սմբուկի համար՝ 80-100դր., տաքդեղի համար՝ 200-250դր.:

Լսեցին 3 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում առաջարկվեց կատարել փոփոխություններ և լրացումներ (զեկուցող՝ ռեկտոր՝ Հ.Վ. Թոքմաջյան):

Որոշեցին 3 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016թ. նոյեմբերի 24-ի N2-11/16/2 և 2017թ. հունվարի 31-ի N1-01/17/1 որոշումներով հաստատված «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- 5-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Դոկտորի գիտական աստիճան ունեցող, սակայն գիտական կոչում չունեցող անձին, գիտական խորհրդի որոշմամբ, կարող է շնորհվել 3-րդ կամ 4-րդ տարակարգ՝ կախված ուսումնական կամ գիտական գործունեության ցուցանիշներից: Գիտական կամ գիտամանկավարժական գործունեության 3 տարվա ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 5 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 3) կամ գյուտի արտոնագիր կամ միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցում ունեցող անձին շնորհվում է 3-րդ տարակարգ, իսկ չունեցողին՝ 4-րդ»:

- 8-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող, սակայն գիտական կոչում չունեցող անձին, գիտխորհրդի որոշմամբ կարող է շնորհվել 7-րդ կամ 8-րդ տարակարգ կախված ուսումնական կամ գիտական գործունեության ցուցանիշներից: Գիտական կամ գիտամանկավարժական գործունեության 3 տարվա ստաժ և վերջին

5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 4 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 2) կամ գյուտի արտոնագիր կամ միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցումներ ունեցող անձին շնորհվում է 7-րդ տարակարգ, իսկ չունեցողին՝ 8-րդ»:

- 11-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 11-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 5 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 2) կամ գյուտի արտոնագիր կամ միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցում, հանձնել է թեկնածուական մասնագիտական քննություն կամ ունի գիտական կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն 10 տարվա ստաժ»:

- 12-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 12-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 2 աշխատանք (ագրարային գիտությունների համար՝ 1) կամ գյուտի արտոնագիր կամ միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցում, հանձնել է թեկնածուական մասնագիտական քննություն կամ ունի գիտական կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն 3 տարվա ստաժ»:

Լսեցին 4 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրի ուսանողներին, մագիստրանտներին ուսանողական նպաստ տալու մրցույթի կազմակերպման (շրջափոխման) և անցկացման» կարգի մասին:

Որոշեցին 4 - Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրի ուսանողներին, մագիստրանտներին ուսանողական նպաստ տալու մրցույթի կազմակերպման (շրջափոխման) և անցկացման» կարգը:

Լսեցին 5 - Քննարկվեց ուսանողների տեղափոխության մասին ֆակուլտետների ղեկանների ներկայացումները:

Որոշեցին 5 - Հիմք ընդունելով ֆակուլտետների ղեկանների ներկայացումները և ուսանողների դիմումները գիտխորհուրդը որոշում է՝

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանող՝ Յուրա Ալեքսեյի Առաքելյանին տեղափոխել հեռակա ուսումնա համակարգի «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» մասնագիտության 2-րդ կուրս: «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողներ՝ Միեր Վիրաբի Բալայանին, Նաիրա Հակոբի Սուլեյմանյանին, Վարդուհի Արթուրի

Վարդանյանին, Արա Գառնիկի Ավանեսյանին, Արման Անդրանիկի Գրիգորյանին, Հարություն Վանյայի Խաչատրյանին, Նվեր Էռնիկի Մուսայելյանին, Էրիկ Համլետի Հայրյանին տեղափոխել առկա ուսուցման համակարգի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության 2-րդ կուրս: Բակալավրի առկա ուսուցման համակարգի «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող՝ Անդրանիկ Միքայելի Պետրոսյանին և «Անասնաբուժություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող՝ Արսեն Վարդանի Ավետիսյանին տեղափոխել հեռակա ուսուցման համակարգի «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտության 2-րդ կուրս: «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանող՝ Անի Միերի Հովսեփյանին տեղափոխել հեռակա ուսուցման համակարգի «Ագրոբիզնես» մասնագիտության 2-րդ կուրս:

Լսեցին 6 - Լեհաստանում կայանալիք միջազգային գիտաժողովին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչների մասնակցության մասին:

Որոշեցին 6 - Սույն թվականի հոկտեմբերի 4-6-ը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 4 հոգուց բաղկացած պատվիրակությանը՝ ռեկտոր Հ.Թորմաջյանի գլխավորությամբ, գործուղել Լեհաստան՝ կայանալիք միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով:

Լսեցին 7 - ԱՀ Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության 1-ին կուրսի դասընթացների կազմակերպման մասին:

Որոշեցին 7 - Հանձնարարել պրոռեկտոր՝ Ռ.Հարությունյանին սույն թվականի սեպտեմբերի 4-ից Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում ուսումնական պլանին համապատասխան կազմակերպել «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության 1-ին կուրսի դասընթացները:

Լսեցին 8 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության առաջին կուրսերում լրացուցիչ պետպատվերի տեղեր հատկացնելու մասին:

Որոշեցին 8 - Հանձնանարել պրոռեկտոր՝ Ռ.Հարությունյանին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության առաջին կուրսերում լրացուցիչ պետպատվերի տեղեր հատկացնելու նպատակով դիմել ԱՀ ԿԳ և սպորտի նախարարությանը:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան